Գ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 1893 ԹԻՒ 22

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

Editor, M. S. Gabriel, M.D. 202 W.23d St. New York Խմբագիր, Տր. Մ. Ս. Գաբրիէլեան

«ՀԱՅՔ»ի ՉՈՐՈՐԴ ՏԱՐԻՆ

Խմբագիրն վստահ է և կրնայ վստահացուցանել իւր արգոյ ընթերցողներն, թէ «Հայք» 1894ին կը լինի աւելի լաւ թերթ։

Բաղձալի է որ բաժանորդաց թիւն ալ աւելի մեծ լինի և ընթերցողք աւելի բազմաթիւ։

Երանի թէ Ամերիկայի և այլ աշխարհաց մեր ազնիւ համակրողք անյապաղ և անմիջապէս անէին իրենց բոլոր ջանքն ու յղէին մեզ բաժանորդագրութեանց ցանկն ու գինն, որպէսզի կարեւորագոյն գործունէութեանց համար և մեք կարենայինք փութով շարժիլ։

ՓՈԽԱՑԷՔ

Արդէն յայտարարած եմք համօրէն հայ հայրենասիրաց թէ մեք լոկ քննադատող չեմք, և մանաւանդ այսուհետև այլ ևս չատ քննադատելու ալ տեղի պիտի չունենանք։ Մեր ոյժն և ուշ պիտի նուիրեմք մեր դրական Ծրագրի գործադրման։ Մըտադիր եմք Ամերիկայէն տնցնիլ ի Հին Աշխարհն և զանազան երկրաց մէջ գտնել, տեսնել հայ ընկերակցութիւններն ու հասուն անհատներն, օգտիլ խոհուններու խորհուրդներէն, և կարող, իմաստուն և վստահելի Մարմնոյ մի կազմաւորութիւնը։

Առ այս «Հայք»ի խմբագիրն պէտք ունի հայրենասիրաց ամենակերպ աջակցութեան։ «Հայք»ի հրատարակութիւն պիտի շարունակուի։ Թերթին դժուարընթաց ելմտականին և խմբագրին երկար ուղեւորութեանն և պատրաստութեանց համար նիւթական կարեւոր նպաստներու անհրաժեշտ հարկ կայ։ Ի հարկէ ոչ ինչ կը սպասեմք այնպիսիներէ որք սքանչելի սրամտութեամբ կը կարծեն թէ ազգէն դրամ կորզելու ետեւէ եմք։ Մեք այս դժուարին գործին ձեռնարկելու մտադրած եմք այն հաւատով թէ անցեալ երեք տարուան «Հայք»ն չատերու վստահութեանն արժանացուցած է զմեզ, և չատերն պիտի փութան հարկաւոր դիւրութիւնն մեզ ընծայելու մասնակցիլ։

Հաւատով սկսանք և յուսով կը սպասեմք։

Փութացէք, ո՛ Ազնիւ հայրենակիցք,

ՓՈԽԱՑԷՔ։

*

* *

Սատըդ Էֆէնտի սմն Նիւ Ռիվիւի մէջ խայտառակ փորձ մի կ'անէ Անգլեւ հայկական ընկերութեան նախագահ Տէր Սթիվընսընի յօդուածն հերքելու, որ նոյն հանդիսի նախորդ թուոյն մէջ հրատարակուած էր։

ՀԱՅԿ

HAÏK

Entered as second-class mail matter at P. O., New York, N. Y.

Address Հասցէ
Editor of "Haïk," 202 West 23 St. New York U. S. America.
կամ Redaction de la Revue "Haïk," ևն։

«Հայք»ի իւրաքանչիւր թիւը կը բաղկանայ 16 երեսներէ, և կը հրատարակուի ամիսն երկու անգամ։

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար երկու տոլար կամ 10 ֆրանք

Կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

"Հայք"ի Չորրորդ Տարին։—Փութացէք— Ո՞ւր է Հակասութիւնը.— "Հայք" և Յեղափոխական Կուսակցութիւնք.— Հայաստան Ինչպէս որ է. Զարսանցագ— Նամակ Մէզրէէն— Նամակ Կ. Պոլսէն— Հրաւէր Յուղիղ Ճանապարհ.—Սուլթան Համիտ և մուսիւլման Հաճիներ— Օրէնք Միացեալ Նահանգաց Քաղաքացի Լինելու— Բազմավէպ. Հանդէս Ամսօրեայ. Արաքս.— Ուրախալի Լուր մի— Այլ և այլք։

Կը խնդրեմք որ մրնի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

76 E. 9դ Փողոց
Պրոտուէյի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անուանն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր։

ՈՒՐ Է ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Մեր ճարահատեալ հակառակորդներէն ոմանք սկսած են փորձել ցուցնել թէ ՀԱՅԿ հակասական սկզբունքներ կը պարզէ։ Անուս և պարզամիտ ընթերցող մի իմաստից բովանդակն ըմբռնելու չափ լայն հասկացողութիւն չունենալով՝ կրնայ չփոթիլ երբեմն, բայց երբ մշակեալ համարուած անհատներ ալ գայթակղեալ ցուցնեն իրենք զիրենք, իրաւունք կուտան մեզ զարմանալու։

Պոսթընի մէջ Հնչակեանք Նոյ. 26ին ժողով արած և ոմն ճառած է ՀԱՅԿԻ այլ և այլ թիւերէն հակասական երեւցող կըտորներ կարդալով։ ՀԱՅԿԻ 17դ թուոյ մէջ ԴՐԱՆ ԲԱՐԲԱՐՈՍՈՒԹԵԱՆ դէմ զայրագին մեր յօդուած կը վերջանայ «կեցցե՛ն յեղափոխականք»ով։ Բայց այդու միթէ դովա՞ծ կը լինիմք թիւր և անապարող գործողութիւններն։ Ո՞չ ապաքէն նոյն յօդուածի մէջ իսկ իբրեւ «եղրակացութիւն» ասացեր եմք թէ պարտ է «յեղափոխութեան ՊԱՏՐԱՍՏՈՒԻ։»

Միթէ ի սկզբանէ անտի ևս չարունակ չե՞մք պնդած նախապատրաստութեան հարկին վերայ։ Հնչակեանց եռանդն գովելու ատեն՝ միշտ հոգ տարած չե՞մք նաեւ աւելցունելու թէ խոհեմութենէ կը թերանան, թէ չեն ծրագրած խորին հմտութեամբ սկիզբն, միջոցն և կատարածն։ Որոշապէս քննադատած չե՞մք զնոսա թէ «առանց նախապատրաստութիւններն կատարելագործելու՝ կաճապարեն ի գործ։ ...Մի՛ լինիք չափազանց յանձնապաստան և վաղվաղկոտ, մեծ և ընդարձակ միջոցներ պէտք են մեծ և ահագին գործն կատարելու համար։» (ՀԱՅԿ, 1892, թ. 19։)

Ներկայ տարուան թ. 16ի մէջ ալ հնչակեան և ոչ-հնչակեան յեղափոխականաց միջեւ էական տարբերութիւնն միթէ սապէս նշանակած չե՞մք— «Ի մի բան, ոչ-հնչակեան յեղափոխականք աւելի դժուարին և ահաւոր դործ կը համարին յեղափոխութիւնն և ուստի աւելի՛ ընդարձակ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆՑ պէտք կը տեսնեն։»

Ոմանք դարձեալ իրենց մատն կը դընեն «Ցայտարարութեան» այն խօսքին վերայ թէ արտասահմանեան Հայաստանն պէտք է լինի յեղափոխական, իսկ Թրքական Հայաստանն կրթական և խաղաղ։

Ցիրաւի զարմանալի է որ այդ խօսք գայթակղական առեղծուած մի երեւցած լինի ոմանց։ Դիցուք թէ Հայաստանի մէջ յեղափոխական ոգւով խմորուած հզօր անհատներու ստուար թիւ մի արդէն գտնուէր, միթէ դոքա լաւ արած պիտի լինէի՞ն եթէ պատեհ ժամանակէն առաջ յեղափոխական երեւէին. և վաղաժամ հրաւիրէին իրենց դէմ կառավարութեան ուժերն.— Ո՛չ։ Նոքա խաղաղականի դիմակ պիտի կրէին, և օրինական դիմումներ պիտի անէին, իսկ առնական կորովոյ ցոյցերն անհատական պատասխանատուութեամբ և ինքնաբեր պիտի կատարուէին։

Գանք որ Թրքահայոց մէջ դեռ յեղափոխական ճշմարիտ ոգին և բնութիւնն հաղիւ հազ սկզբնական ծիլի մի փափուկ վիճակն ունի։ Դեռ Հայոց անհուն մեծամասնութիւնն պատուոյ զգացմամբ, արդարասիրութեան կրիւք բաւական զօրացած չէ, այսինքն յեղափոխական չէ. ուստի և ահագին սխալ է զնոսա յեղափոխական երեւցունել արուեստական միջոցներով. այո՛, անիրաւ անխոհեմութիւն է նոցա հագցունել յեղափոխական դիմակ և ենթարկել այնպիսի գերակշիռ ուժերու վաղահաս հարուածներուն որոց դիմադրելու ոչ ոյժ ունին դեռ և ոչ ոգի մեր հէք եղբարք։

Ուրեմն, կը կրկնեմք, թէ Թրքահայք խաղաղ և կրթական պէտք է լինին... ցորչափ անպատրաստ և անկար են ոգւով և բաղկաւ։

Իսկ թէ ինչպէս կրնան պատրաստուիլ նոքա ոգւով և բաղկաւ, այդ մասին, փոքր ինչ բացատրութիւն պիտի գտնեն ընթերցողք ներկայ թուոյ մեծ յօդուածին մէջ։

Ուրախութեամբ կը տեսնեմք թէ մեր Հնչակեան եղբարց շատերու թիւրիմացութիւնն փարատած է, և փրփրալիր ցասումն սկսած է ցածնուլ. դիմախօսութեան ցեխոտ և աղմկոտ հոսանքն սկսած է հանդարտիլ և յստակիլ։ Ստացանք մի քանի Հնչակեաններու լուրջ և համակրական նամակներն։ Մին ի Հնչակեանց գրած է հետեւեալ պատուական տողերն—

«ՀԱՅՐի վերջին թուոյն մէջ ձեր զետեղած խմբագրականն գոհ ըրաւ զիս և շատերն, ուր յաղթանակն ՍԷՐՆ կը տանէր։... Ես այնչափ կոյր Հնչակեան մը չեմ որ խորհիմ թէ ամեն ընտիր բան զոհել պէտք է ի սէր այդ անուան։ Կը յարգեմ ինչ որ լաւ և ազգասիրական է այդ կուսակցութեան մէջ, իսկ անպէտն ու յոռին կը մերժեմ։ ՀԱՅՐի յաջողութեան ի սրտէ բաղձացող՝ ներփակեալ երկու տոլարն կը յղեմ ձեզ ի բաժանորդագրութիւն, և յուսով եմ թէ այլք ևս պիտի հետեւին իմ օրինակիս՝ ձեր նպատակն որոշ հասկանալով, զի շատ թիւր մեկնութիւններ տրուեցան ձեր Ցայտարարութեան, սակայն կարծեմ հիմա շատերն այնքան ցուրտ աչօք չեն նայիր դէպ ի ՀԱՅՐն»

Այո՛, մեք ամենքս պարտիմք սիրով և յարգանօք վարուիլ միմեանց հետ, մինչև իսկ երբ պարտաւորիմք քննադատել զիրար։

Մի՛ լիցի կարծել թէ մեք կռուասէր և բծախնդիր ոգւով քննադատեցինք Հնչակեան կուսակցութիւնն. մեզ հազար անգամ աւելի հաճելի է ամեն մարդ և ամեն կուսակցութիւն գովելու առիթներ ունենալ։ Միթէ ո՞ և է լուրջ մարդ պիտի գովէ՞ր զմեզ եթէ լռէինք երբ Հնչակեան պետերու եղանակաց և ընթացից մանրամասնութիւնք հետ զհետէ աւելի պարզուած լինելով՝ տեսանք թէ ազգային դատին պաշտպանութիւնն գահավէժ ուղղութեան մէջ մտած է։

«ՀԱՅՐ»
ԵՒ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«Երբ ժողովրդի կամ ազգի մի մէջ հանրային կարծիք և հանրային շահեր կը գոյանան, կը կազմուին նաև կուսակցութիւններ իբրև անհրաժեշտ հետեւանք։... Կուսակցութեանց իւրաքանչիւրն խընդրոյն մէկ երեսն ի՛նչ, կը քննէ, կը լուսաւորէ. մէկալն՝ միւս կողմն կ'ուսումնասիրէ, կը յուզէ... և այսպէսով խնդրոյն ամեն կողմն, ամբողջն կը լուսաւորի։ Այսոր հետեւութիւնն կը լինի գործնականին մէջ ծայրայեղութեանց զ-

պումն և լաւագոյն՝ իմաստնագոյն ուղղութիւն։»— Այդպէս կ'ասէինք մասնաւոր յօդուածով,(Տես ՀԱՅՐ թիւ 21, 1891, «Կուսակցութիւնն Հայոց մէջ»), և կը կրկնեմք այսօր ալ թէ մեք կուսակցութիւններն «անխուսափելի և օգտակար» կը ճանաչեմք (թիւ 22, 1891)։

Ուրեմն— կրնան հարցնել ոմանք—ինչո՞ւ դուք կուսակցութեան մի չէք յարիր և միայն ուրիշներն կը քննադատէք։

Մեր պատասխանն պարզ է. մեք քիչ մի ժամանակ (1889ին) պատկանեցանք այս ինչ կուսակցութեան- բայց հզօր պատճառ ունեցանք զայն լքանելու և լքինք։

Այս տարի ուրիշ մէկ կուսակցութեան մասին մեր տեսակութիւններն ճշդել և ամբողջացուցանել ջանացինք, նորա հիմնադիրներէն միոյն հետ երկար և բազմակրկնակ տեսութիւններ ունենալով։ Մեր անկեղծ փափաքն այն էր որ եթէ հիմնական կէտերու մէջ համաձայն գտնուէինք, մեք ևս յարէինք նմա, և կեդրոնի ու նոր կուսակցութեան հոգերէն ալ տղատելով կարենայինք նոր քայլեր առնուլ։ Խղճմտօրէն, առանց աճապարելու քննեցինք, հարցումներ և առարկութիւններ ներկայացուցինք, պատասխաններ ու առարկութիւններ լսեցինք, և ջանացինք գոնէ մասնակի բարեփոխում մի ընդունելի գործել կուսակցութեան սահմանադրութեան մէջ, և որովհետև այս ամեն ջանք ի զուր սպառեցան, մեք ալ ստիպուեցանք չյարիլ նմա։

Ծանօթ է մեզ թէ ոչ սակաւ երիտասարդք այդ կուսակցութեան յարած են հետեւեալ պարզ տրամաբանութեամբ.—

Հ Կուսակցութիւնն յեղափոխական է.

Ես ալ յեղափոխական եմ.

Ուրեմն ես այդ կուսակցութեան կը պատկանիմ։

Այդ տրամաբանութիւն գոհ չէր կրնար անել զմեզ։ Մեք շատոնց նշանակած եմք թէ յեղափոխական կայ ու յեղափոխական ալ (Տես ՀԱՅՐ թիւ 9, 1892։)

Կրնայ կուսակցութիւն մի յեղափոխական լինիլ, բայց ունենալ նախապատրաստական միջոցներու, շարժմանց շրջանակի և նպատակի այնպիսի տարբեր ըմբռնում որ ուրիշ յեղափոխականի մի ճախող, թիւր, անյարմար երևի։

Միացեալ և զօրաւոր երեւնալու փափաքէն մղեալ՝ ի մի կուսակցութիւն գալ տարտամ և անորոշ գաղափարօք, մինչեւ անգամ տարբեր համոզումներ ունենալով, և կայմել անհամամիտ անհատներու խառնակոյտ մի և կուսակցութիւն կոչել զայն՝ է անդովելի և վտանգաւոր գործ։

Լա՛ւ, պիտի կրնան ասել ոմանք, ազատ էք դուք չյարիլ այս ինչ կուսակցութեան, բայց ի՞նչ հարկ կայ զայն քննադատել։

Երկու պատճառաւ հարկ կը համարէի քննադատել զայն, նախ ցուցնելու համար թէ լուրջ շարժառիթներ ունէի այնմ չյարելու. երկրորդ՝ լուսաւորելու համար նոյն կուսակցութեան պատկանողներու մտաբաց անհատներն, որպէս զի սոքա ի ներքուստ աշխատին բարեփոխել կուսակցութեան սահմանադրութիւնն, և կամ, եթէ այդ անհնար գտնեն, գիտնան թէ ինչ պարտին անել։ Մարդս սխալական է, բայց նաև ուղղելի. կրնայ ոք կուսակցութեան մի յարիլ, և յետոյ՝ տեսնելով թէ սխալած է՝ քաջութեամբ հրաժարիլ։

Կը մնայ երրորդ հարցում մի, զոր ոմանք կարող են ուղղել մեզ.—Դուք, կարող են ասել, կը քննադատէք այս ինչ կուսակցութիւն, բայց չէք ներկայացուներ դրական ծրագիր մի։

Կը պատասխանեմք թէ արդարև բաւական չէ զայլս քննադատել, պէտք է հայրենասէր երիտասարդաց ուժերուն և ջանից համար որոշ, դրական ուղղութիւն մի նշանակել, և կազմաւորեալ ճանապարհէ մի հուսեցուցանել նոցա գործունէութիւն։

Ինչպէս ծանուցած եմք 20դ թուով, ունինք դրական գործունէութեան ծրագիր մի զոր յօրինելու ատեն առաջի աչաց ունեցած եմք ուրիշ կուսակցութեանց լաւ և յոռի կողմերն, և օգտած եմք նոցա փորձերէն ու փորձանքներէն։

Բայցալի էր որ սխալ քայլ առնող կուսակցութիւնն ինքն տեսնէր սխալն, համոզուէր և չարիքն ուղղէր։ Սակայն պատմութիւնն կը ցուցնէ թէ կուսակցութիւնք ընդհանրապէս իրենք գիրենք չատ չեն ուղղեր, խորհելու առաջին կերպէն չեն կրնար դիւրաւ հրաժարիլ, և նոր կուսակցութիւն մ'է որ կ'օգտի նոցա փորձառութենէն և կը հետևի լաւագոյն ուղղութեան։

Լաւագոյն ուղղութեան մասին ընդհանուր սկզբունքներ միայն կրնամք նշանակել հրապարակաւ, առանց այնպիսի կետե-

ռու որք մեր Ծրագրի գաղանեաց բանալին դառնային ի ձեռս թշնամեաց։

ՄԵԾ ՍԿԶԲՈՒՆՔՆ սապէս կը բանաձևեմք։—

Գործիչն պարտի խորապէս ճանաչել իւր ժողովրդի ոչ միայն նիւթական այլ և բարոյական վիճակ, և իւր եղանակներն յարմարցունել այդ վիճակի։ Ո՛չ փառաւորէն ու բաղձալիէն այլ հիմնականէն ու կարելիէն պարտի սկսիլ։

Արեւմտեան Եւրոպիոյ մէջ ուսած Ռուսերս ազատական ծրագիր յղացան Ռուսիոյ համար և ուզեցին որ իբրև հին Խորհրդարանական կառավարութեան՝ գիւղացի տարրն սէրֆութենէ բարձրանայ անձնական ազատութեան և անհատական սեպհականատիրութեան։ Հրովարտակ ելաւ, օրէնքներն գրքերու մէջ փոխուեցան, բայց զարմանօք կը տեսնուի մինչև ցարդ թէ ռուս գիւղացին կը նախընտրէ առաջին համայնական մշակութեան կերպն, քանզի դարաւոր սէրֆութեան մէջ կորուսած է անհատական նախաձեռնութեան և անձնական պատասխանատուութեան կրքին։

Խորին և փափուկ արուեստ է ժողովրդի առաջնորդել։ Եւրոպական վարժարաններէ ու գիտութիւններէ ճշմարտապէս օգտեալ առաջնորդին մեծ յատկութիւնն պիտի լինի գիտնալ զժողովուրդն բերել յառաջին և փոքր քայլափոխ յառաջդիմական, այնպէս որ նորա տկար սը բունք վարժին և զօրանան։

Դէպ յազատութիւն և յինքնօրինութիւն դիմելն ոստմամբ և հոկայի քայլերով չի յաջողիր, այլ փոքրիկ, համեստ քայլափոխներով։

Ժողովուրդ մի որոյ անհուն մեծամասնութիւնն սոսկալի անպատուութեանց կը հանդուրժէ անմռունչ, միասնական գործողութեան և ընդհանուր յեղափոխութեան պատրաստ չէ. և եթէ գործիչն այժմէն ի յեղափոխութիւն դրդռէ հազուագիւտ արթնցած երիտասարդներն, մեծապէս կը սխալի, քանզի ժողովուրդն դեռ ընդունակ չէ արձակուած կայծէն կրակ առնլու, և կը ճմլուի կանխահաս հարուածոց տակ։

Ժողովուրդն անհատներէ կը բաղկանայ, պէտք է անհատներն նախ պատրաստուին որպէս զի կազմակերպութեան և միացեալ գործողութեան ընդունակ լինին։ Անհատներու պատրաստութիւնն երկար խմորմամբ կը լինի։ Պէտք է անհատի օրինակէն անհատն ազդուի, մին զմիւսն խմորէ մինչև որ ժողովրդի մեծ մասն կենաց խմորովն խմորուի։

Այս սկզբունքն կը բացատրէինք նաև անցեալ տարի երբ կ'ասէինք— «Այն յեղափոխութիւն զոր մեք կը գուշակեմք, շատ տարբեր է անկէ զոր դուք կը կարծէք։ Մեք արուեստական կերպով պատրաստուած յեղափոխութեան չեմք բաղձար. ։ Մշակեալ և խոհուն Հայեր, և անոնցմէ ներշնչեալ գաղայուն և արթուն Հայեր, Հայեր որք արդարութեան ծարաւի, պատուոյ նախանձաւոր, յառաջդիմութեան ըղձացող, ազատութեան սիրահար են զանազան աստիճաններով, ուշ կամ կանուխ պիտի հասնին զգացմանց այն փառաւոր վիճակին, յորմէ յօժար պիտի լինին իրենց կեանք տալու այն բարեկարգութեանց համար առանց որոց կեանքն անտանելի պիտի թուի իրենց։» (ՀԱՅՐ 1892 Մայիս 1)

Ուրեմն, ըստ մեզ, գործիչն պարտի նախ աշխատիլ ամենայն փութով ժողովրդի սուար մէկ մասն «արդարութեան ծարաւի և պատուոյ նախանձաւոր» գործել, որպէս զի ազատութեան համար կեանքն խոկ տալու յօժարութիւնն ծնի ի պատեհ ժամուն։

Ժողովրդեան արդարութեան կիրքն է յեղափոխութեան արմատն, իսկ յեղափոխութիւնն ու արտաքին բարեկարգութիւնն՝ պտուղն է։ Գործիչն թող հերկէ, սերմանէ, ջրէ, խնամէ, և պիտի տեսնէ թէ պտուղն ինքնին երեւան կուգայ յարմար եղանակին։

Յեղափոխութիւնն պարտի բնական, սրտաբուխ և անզսպելի արտայայտութիւնն լինիլ ժողովրդային զգացմանց և համոզմանց ներքին բարեփոխութեան, ոչ թէ մի քանիներու կողմանէ յատկապէս դրդռուած արուեստական ցնցում։

Անաչառ դիտողութիւնն կը պարտաւորէ զմեզ խոստովանիլ թէ Թուրքիոյ մէջ կատարուած վերջին տարիներու յուզմանց մէջ աչքի դարնող անբնական, բռնաղբօսիկ բան մի կայ. հարստահարեալ ժողովրդի մի այլ ևս ժուժալ չկարենալով՝ դէմ դնելու կամ ինքզինք պաշտպանելու ինքնեկ, որտաբուխ կերպն չտես-

նուիր, և այդ է պատճառ որ շարժմունք չեն կրնար յաջողիլ և չեն կրնար տարածուիլ։

Սրտաքին և արուեստական դրդիռն ունի երկու անպատեհութիւն, նախ որ վաղանցիկ և անտոկուն շարժում յառաջ կը բերէ, երկրորդ որ անդէպ առիթներու մէջ յաճախ կը յայտնէ ինքզինք հազիւ արդարանալի եղանակաւ։ Այս մասին խօսելով կ'ասէինք առթիւ մի թէ պէտք է եփել Տաճկահայոց ազատական խորհուրդներն, «զի գիտեմք թէ երբեմն այնպիսի ցոյցեր կ'անեն որք պարզապէս յանցաւոր կը կացուցանեն զնոսա առաջի օրինաց։» Եւ Խիկարեան նամակն ալ կը պատմէր թէ ինչպէս դրդռեալ երիտասարդք ոմանք յափունս եփրատայ՝ ոստիկան մի ծեծեր էին յանդէպս և ապա հարուստ հայ մի հարստահարեր էին որ իրենց յանցանքի տուգանքն վճարէ։ (Տես ՀԱՅՐ, 1892, թիւ 9։)

Այսպիսի խրատ և սկզբունք անշուշտ մեր եռանդուն երիտասարդաց մէկ մասին անախորժ և դժպհի կը թուին, զի նոքա կ'ուզեն որ գործուի շուտով մեծ գործն։ Սակայն կը յուսամք թէ զգօնամիտներն՝ կատարուած փորձերուն նայելով՝ պիտի համոզուին թէ այսպիսի ահագին և մեծ գործի մէջ աճապարանքն յոյժ վտանգաւոր է· պէտք է պատրաստութեանց կարեւոր ուշադրութիւնն, հոգն ու ժամանակն տալ։ Դրդիռ յառաջ բերել դիւրին է, բայց չի տեր և չի դիմանար· պէտք է նախ լուսաւոր մտքեր և հասուն զգացումներ մշակել, որպէս զի յետոյ դրդիռն օգուտ գործէ ուժով բնութիւններ ստաքի հանելով։

Ժողովրդի առաջնորդն տեսակ մի մանկաբարձ է, Նոր Հայաստան մի .ի ծնունդ բերելու համար պարտի նա ծայրագոյն իմաստութեամբ գործել։ Եթէ աճապարելով դրդռիչ դեղեր տայ, կրնայ դրութիւնն ցնցել և ծնունդ մի տեսնել, բայց վիժեալ և մեռեալ ծնունդ մի։

Ծննդաբերութեան ժամուն սպասել գիտնալն մեծ վարպետութիւն է։ Պարտաւորութեան փափուկ մէկ մասն է գիտնալ ձեռնպահ մնալ երբ հարկ է սպասել։ ԲԱԺՈՑ, Ֆռանսացի մեծ ուսուցիչն մանկաբարձութեան, յաճախ կը յեղյեղէր իւր աշակերտաց այս սկզբունքն— Գիտնալ սպասել ուր հարկ է սպասել, գիտնալ ձեռնպահ մնալ մինչև որ դէպ ժամն հասնի միշամտութեամբ։

Այս ասել չէ թէ հայ գործիչին գործն է սպասել պարապ։ Այժմ շատ և շատ գործ ունի նա։ Ժողովուրդն ինքն իրեն թողուելով չէ որ պիտի հասուննայ· անհատներն առանց կրթիչ ազդեցութեան ենթարկուելու չեն կրնար արդարասէր և վեհանձն տրամադրութիւններ ունենալ։ Եւ ատ կրթութիւն ասելով չեմք ուզեր այն դպրոցական, ընտանեկան և ընկերային կրթութիւնն նշանակել որ սերունդներու և շրջաններու երկար միջոցներ կը պահանջէ, (թէպէտ և հարկ է այդ կըրթութեան ալ անդադար աշխատիլ։)Ներկայ պարագային մէջ կրթութիւն բառն մեք մասնաւոր մտօք կ'առնումք, այն է քաղաքական կեանքի և ինքնօրինութեան պայման եղող այն կրթութիւնն որ կը կայանայ արդարութիւն, օրէնք, ազատութիւն և պատիւ սիրելու մէջ, և զոր ամեն հասակի անհատք կրնան ստանալ զանազան չափով։

Այսպիսի կրթութեան հաղորդիչ են գործնական կեանքի մէջ աեսնուած կենդանի օրինակներն, քաջ, համարձակ, կորովի, աներկիւղ ընթացքն արդարասէր մարդուն։ Օրինակն, մանաւանդ ողջամիտ և արդար քաջութեան օրինակն յոյժ փոխանցական բնութիւն ունի, լսողաց և տեսնողաց սրտին մէջ քնացող քաջութիւնն կը զարթուցանէ։ Ժողովրդի լուսամիտ և ընտիր երիտասարդներուն մէջէն պիտի ելնեն այդպիսի կենդանի ախոյեաններ որք իրենց ընտանեկան կամ դրացիական համեստ շրջանին մէջ անօրէնի մի դէմ պիտի մարտնչին, պիղծ մի պիտի դաշնեն, անզգամ և անգութ հարստահարչի մի հետ կռուելով վիրաւորին կամ մեռնին։ Հայաստանն փրկելու հպարտ խորհուրդէն առաջ հայ օրիորդ մի, հայ կին մի, հայ անիրաւեալ մի փրկել է բնական և առաջին թէև համեստ քայլն։ Ընտանեկան պարտուց եւ սրտի մօտիկ շրջանին մէջ երկչոտ, վատ դտնուող անհատն չէ և չէ՛ կարող ազգային բարձր իտէականով և հայրենասիրութեան ոգւով քաջագործել։

Հայերն քաջ և վեհանձն անելու միջոց կայ, ասացի, այդ բանին համար բարձր ուսմունք պէտք չէ, և ոչ իսկ ցած ուսմունք։ Կեանքի գործնական վարժարանին մէջ մարդիկ կը սովրին քաջութեան դասն։ Մարդ այն ատեն աւելի կը միտի անձնա-

պաշտպանութեան երբ միջոց և հետևապէս յոյս ունենայ յաջող դիմադրութեան։ Երբ արտասահմանի հայ երիտասարդք գէնք գործածելու և մենամարտելու կրթուին, արի տրամադրութեանց ծնունդ պիտի տեսնեն իրենց բնաւորութեան մէջ։ Երեք տարիէ ի վեր կ'աղաղակեմք թէ գաղթական Հայեր կենսական դեր ունին կատարել Հայաստանի ապատութեան սուրբ գործոյն մէջ, և կրկին ու կրկին բացատրեցինք թէ քաջութեան ազնուութեան և արդարասիրութեան փրկաւէտ խմորն արտասահմանի Հայերն յանձինս իւրեանց պարտին ևկրնան տանիլ Հայրենիք։ Սակայն դժբաղդաբար երբեմն ներքին ոյժ պէտք է ասացողք և այժմ յեղափոխութիւն գոռացողք կարևորութիւն և ոյժ չտուին մեր քարոզներուն։

Զեմք յուսատիր, սակայն, սակաւ ճշմարտութիւնն պիտի յաղթանակէ և սուրբ գործն բնական և ուղիղ ճանբուն մէջ պիտի մտնէ ի մխիթարութիւն ամենայն Հայրենասիրաց։

ՀԱՅԱՍՏԱՆ ԻՆՉՊԷՍ ՈՐ Է

ԶԱՐՍԱՆՃԱԳ

Ա.

Այն գաւառն որ այսօր Զարսանճագ կամ Զհար Սանճագ կը կոչուի, մեր ազգային պատմութեան մէջ Զորրորդ Հայքի ԽՈՉՆԱՑ ԳԱՒԱՌՆ է, արևելեան Եփրատի աջ ափանց վերայ, Խարբերդու, Բալուայ և Զմշկածակի մէջտեղն։ Իւր գիւղերն 600 ի մօտ կը հաշուին, որոց գլխաւոր կեդրոններն են Բաչաղակ, Մազկերտ, Բերի, Բերդակ և Խոզատ։ Երկիրն մեծ մասամբ դաշտային, յուռթի և առողջ է։

Հաւանական հաշուով բնակչաց թիւն 100,000 է, որոց 80,000ն Հայ են, և մնացեալք Քիւրդ և Թուրք։ Թանձ գիւղն համակ հայաբնակ է, իբր 80 տուն, և իւրաքանչիւր ընտանիք 10էն մինչև 30 անդամներէ կը բաղկանայ։ Զուտ Քուրդ կամ Թուրք գիւղ ալ կայ, բայց ընդհանրապէս խօսելով, գիւղերու անհուն մեծամասնութեան բնակիչք հայ են մի քանի այլազգի տներ միայն դրացի ունենալով։ Քրդերու բնակութիւնն այս դաշտային երկրի մէջ դիպուածով կը լինի· աւազակութիւն կամ սպանութիւն գործած լինելով՝ ոմանք իրենց լեռներէն և ընկերներէն զատուելու կը ստիպուին, և Պէկերու չնորհիւ դաշտին մէջ կուգան կը բնակին։

Ժողովուրդն վաղայարոյց, աշխատասէր, առողջ և զուարթ է։ տեսած եմ ես 104 տարեկան մի պառաւ, որոյ բոլոր ակռաներն ամբողջ էին ու կրնար սիսեռ ծամել։ Տեսած եմ նաև հին Ուռեկ գիւղի մէջ Զուխեկ անուն զարմանալի ծերունին 120 տարեկան, որոյ մէկ որդին ևս 80 ամեայ ալեւոր մ'էր։

Ամուսնութեան սովորական հասակն է՝ տղոց համար 18էն 25, և աղջկանց համար՝ 18էն 20։ 14 տարեկան կարդել հաղուադէպ է։

Ժողովրդի մեծ մասն հողագործ է, բայց որովհետև հողն արդէն անբաւական է, շատեր կան զանազան արհեստներով զբաղող կամ պանդխտող։ Մանաւանդ պէկանիստ գիւղերուն մէջ են արհեստագործներն—պայտար, հրացանագործ, ներկարար, ոսկերիչ, երկաթագործ և մանաւանդ կտաւագործ։ Այս վերջին կարգի արհեստաւորք բաւական շատուր են։ Թելագործութիւնն ամեն մարդ, այր թէ կին գիտէ· այրն կը գործածէ քարէմաՇ կոչուած մանելիքն և կինն՝ իլիկ։

Երկրագործներն ցորեն, գարի, ոսպ, ճուլպանտ (դեղին ոսպ), չիկոն (կարմրաթոյր ցորեն), կտաւատ, բակլա, կվկլ, կորեկ, քիւշնէ և բամպակ կը մշակեն։ Կըլկըլէն ու կորեկէն ալ հաց կը շինեն։ Քիւշնէն, որ լեղի է, եզանց կեր կուտան։ Հաճար չեն ցաներ յատկապէս, զի ցորենին հետ ինքնաբոյս կ'ելնէ, մանաւանդ գէշ հողի վերայ։

Թիլ հայաբնակ գիւղի բնակիչք մասնաւորապէս վարպետ են սոխի և սխտորի մշակութեան մէջ· քսան ծախելով բաւական շահաւոր կը լինին, թէև չարաչար կ'աշխատին ցայգ և ցերեկ։

Այգի շատ չունին, միայն ուտելու և գինւոյ համար կը մշակեն որթ։ Գինին տան մեծն միայն կը խմէ, տօնի օրերն և կիրակիներն չափահասք ալ կը մասնակցին։

Բ

Զարսանճագի ժողովուրդ երկու կար-

գի տէրանց կը ծառայէ. Թուրք կառավարութեան և Պէկերու։ Ի Բերի կը նըստի գայմագամ, ի Բերդակ՝ միւտիր, Խոզատ և Մազկերտ միւթասարըֆի նիստ են։ Ամենուն վարչական մեծ կեդրոնն է Խարբերդ։

Զարսանճադ մեծ ու փոքր 24 Պէկերու ձեռքն է։ Հողերն պէկերու ստացուածքն են կամ կը համարուին, և երկրագործք սէրֆ են կամ մարապա։ Նոյնպէս տներն պէկերու ստացուածքն են։ Պէկն կրնայ այս կամ այն ընտանիքին հրամայել որ երթայ ուրիշ գիւղ մի բնակի և ուրիշ հող մշակէ նոյն պէկի սահմանին մէջ։

Հողն Պէկին է, ասացի, սերմն ալ պէկն կուտայ. իսկ գիւղացին կը հայթայթէ գործիներ, եզ կամ գոմէշ, և աշխատանք։ Արդիւնքն կէս առ կէս կը բաժնեն իրենց մէջ երկրագործն ու Պէկն։

Երկրագործին բաժնէն կը տրուին պահապանի, ջրպանի բաժիններն, և յանախ կառավարութեան տասանորդն։ Տունն Պէկին սեպհականութիւնն է, ասացի, բայց էմլաքի տուրքն գիւղացին կը վճարէ՝ Պէկի հսկողութեան ներքև։

Պէկերն մեծ իշխանութիւն ունին գիւղացւոց վերայ։ Գիւղացւոց մէջ ինչ կռիւ, վէճ, ընդհարում որ պատահի, Պէկերու փշխանական միջամտութեամբ ամեն ինչ կը վճռուի. պէկն կը ծեծէ յանցաւորն, կը նախատէ, տուգանաց կ'ենթարկէ, կրնայ նաև վռնտել։

Պէկ ընդհանուր անուամբ կոչեցի բոլորն, բայց շատերն Աղա են, և ոմանք միայն պէկ տիտղոսն կը կրեն։

Մեր ժամանակաց պէկերուն քան զամենայն մեծն ու հզօրն Իսմայիլ Պէկն եղած է, որ թէև շատոնց մեռած է, իւրյիշատակ կենդանի կը մնայ Զարսանճադի ժողովրդեան մէջ, մանաւանդ որ 40 տարեկան մարդիկ այսօր դեռ ականատես վկայք են նորա գործոցն ու զօրութեան։

Իսմայիլ պէկ զարմանալի էր։ Որքան որ իւր կրօնական և ցեղային հանգամանք կը ներէին, ունէր բարձր միտք և արդարութեան սէր։

Թուրք կառավարութեան շատ հակառակ էր և որքան որ կարենայր կը դիմադրէր կառավարական հրամանաց և միջամտութեան։ Հայ և Թուրք կամ Քուրդ հպատակացն կը նայէր հաւասար աչօք և յանցաւորն անխտիր և խստիւ կը պատժէր։ Հրաման տրած էր որ իւր իշխանութեան սահմանին մէջ ինչ սնիր որ տեղի ունենար, իսկոյն վկայք ծանուցանէին իրեն, եթէ ոչ իրենք կը պատժուէին չարաչար։ Եփրատայ եզրն քէլէկի սպասող մի հայ փերեզակ սպաննուած էր Քրդէ մի և կողոպտուած։ Ցայնկոյս գետին կային Թուրք քէլէկավարք, որք ի տես ոճրագործութեանն փութացին գետն անցնիլ, բայց չկարացին սպանչին ետեւէն հասնիլ։ Դիմեցին վաղվաղակի Իսմայիլ Պէկի և ծանուցին դէպքն. Պէկն իսկոյն ձիաւորներ յղելով բռնել տուաւ թագուցեալ Քուրդն և կախեց. չորս օր կախուած մնաց ի տես ամենուն, և յետոյ դիակն քաշեցին տարին նետեցին լեռն, թաղման անարժան համարելով։

Իսմայիլ Պէկ չէր թողուր որ հողագործներու կոնայք դաշտ ելնէին և այր մարդու գործ կատարէին։ Նաև չէր թողուր որ եղբարք կամ զաւակներ բաժնուելով գատ տուն լինէին. իւր օրով հայ ընտանիքներ շատ խաղաղցան։ Կը քաջալերէր նաև ուշխարաբուծութիւնն ու մեղուաբուծութիւնն. Հայեր շատ հօտերու տէր դարձան և բաղդատաբար հարստացան նորա օրով։ Բայց այդ ամենն անցեալ է. Այժմ Հայք բնաւ ոչխարի տէր չեն, և շատ հարստահարուած ու աղքատացած են Իսմայիլ Պէկի մահուանէն հետէ։

Խարբերդ, 1 Հոկտ. 93, ԱՐԲՈՒՆ

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ ՄԷԶՐԷԷՆ

Մէզրէ, Հոկ. 25, 1893

Մեծ. խմբագիր

Զարսանճադի գիւղացի Հայոց վիճակին և պէկերու վարմանց մասին բացարութիւն մ'է հետեւեալ դէպքն որ այս միջոցիս ի գլուխ ելնելու մօտ կ'երեւի։

Հաճի Իսմայիլ Պէկի Հայ մարապաներէն մին Օսման Պէկի մարապաներէն մէկուն աղջիկն կը նշանէ իւր որդւոյն։ Օսման Պէկի մարապաներէն մին ալ Հաճի Իսմայիլ Պէկի Ուռեկի մարապաներէն մէկուն դուստրն կը նշանէ իւր տղուն։ Ժամանակ մ'յետոյ Հաճի Իսմայիլի եղբօր Ասլան Պէկի հայ ջորեպանն՝ Խուկոյ՝ կը

սիրահարի Ուռեկցի հարսնցուին և կը փախցունէ զայն՝ աղջկան յօժարութեամբն։

Որովհետև Օսման Պէկ իւր հորեղբօրորդւոց այսինքն Իսմայիլ և Ասլան Պէկերու հետ խռով էր, երբ լսեց Խուկոյի արարքը, ենթադրեց թէ նոցա դրդմամբ առևանգումն տեղի ունեցած էր, ուստի, վրէժն լուծելու համար, ինքն ալ մի քանի հոգի կը յղէ և Իսմայիլ Պէկի մարապային հարսնցուն փախցունել կուտայ, զոր Լուսատառիճ տանելով մէկուն հետ կը պսակեն։

Քանի մը ամիս վերջ այս նորապսակ հարսն առաջին անգամ լինելով մարսնցն կը տանին ի տեսութիւն և ի հաչուութիւն։ Հարսն այդ առթիւ դաղտնապէս կը փախչի կ'երթայ Բաչադակ գիւղ և իւր բուն առաջին նշանածին հետ ամուսնանալու առաջարկ կ'անէ։ Տղուն հայրն կը մերժէ այս խնդիրք, առարկելով թէ ապօրինի է ի կնութիւն իւր որդւոյ առնուլ այնպիսին որ ուրիշի հետ պսակուած է արդէն։ Իսմայիլ Պէկ կը միջնորդէ, բայց զհայրն համոզելու չյաջողելով՝ հայոց առաջնորդ սրբազանին օրինական արտօնութեամբն կ'ուզէ նոր պսակն յաջողցունել։ Աղջիկն ու հայրն, ինչպէս նաև խղճամիտ հայրն ու նորա որդին, երկու կողմէն, կը յղուին ի Մէզրէ առ վարդապետն։ Սակայն Օսման, դարձուածոց իրազեկ, աւելի շուտ կը շարժի, և կ'երթայ Առաջնորդն ի հաւանութիւն կը բերէ երկրորդ պսակն չկատարելու, և աջիկն կը փախցունեն իւր էրկան քով։

Իսմայիլ կը կատաղի երբ գալով կը տեսնէ թէ աղջիկն չէ ի միջի։ Կը դիմէ Բերրի գայմագամին և կը գանգատի Օսմանի դէմ։ Սա չուզելով դատն վարել ի Բերրի, կը դիմէ Մէզրէի կառավարութեան։ Հոս բաւական ատեն զիրար քաշքշեցին երկու պէկերն, դատն մեծցաւ, և նախնական խնդիրն յանհունս կնճռոտեցաւ ուրիշ բազում ամբաստանութեամբք երկուստեք։ Հին գործեր, դաղտ մնացած դէպքեր, անցեալ ոճրագործութիւններ բերուեցան ի հրապարակ միմեանց դէմ։

Այս երկարաձիգ դատային մրցմանց արդիւնքն առ այժմ այն եղաւ որ Հաճի Իսմայիլ Պէկ և եղբայրն Շէրիֆ Պէկ աքսորուեցան, և չատ հաւանական է որ Օսման Պէկ ալ մօտ օրերս աքսորուի։ Իսմայիլի հայ արբանեակ Գաբոն ալ ի վտանգի է։

ՎԱՇՏԱԿ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս, 12 Հոկտ. 1893

Թուրքերը մի առած ունին զոր չատ պարագաներու մէջ կը սիրեն յեղյեղել, «տանիքը պաչարած կրակը դժուարին է մարել», առած զոր չատ իրաւամբ պիտի կրնանք գործածել հրդեհուած հայ սրտերու համար որ գաւառաց մէջ կ'ընեն ինչ որ հարկ է ընել օսմանեան կառավարութեան բարբարոսութեանց դէմ բողոքած լինելու իրենց վիճակի բարւոքում ձեռք ձգելու համար։ Կեսարիոյ փոթորիկէն ետք Սմասիայինն ցոյց կուտայ թէ Էնկիւրիի դատաստան չէ կրցած բառնալ խրտուիլակն որ գաւառներէն կը սպառնայ։

Չորս օր առաջ հասած տեղեկութեան մի համաձայն Երզնկա ձերբակալուած է Արմտանցի Հաճի Գալուստ Արխանեան անուն մի հայ, որ սարսափ կը ձգէ եղեր տեղւոյն կառավարութեան և Թուրք տարրին վրայ։ Ոստիկանատունէն հրաման տրուեցաւ տեղւոյն զինուորական ատենին նախնական քննութիւնները վերջացունելու համար։ Պոլսոյ կողմէն Հաճի Ցարթին Փափազեան անուն մի անձ բանտ նետուեցաւ. սա՝ իբրև թէ, մասնակից է եղեր վերոյիշեալ Գալուստ Արխանեանին։

Կրակը ամեն կողմվառուած է. գաւառներ գրգռուած են. մի կարծէք թէ այս դրգռումէն անմաս է Պոլիսը. այս չորեքշաբթի գիշեր Սամաթիա, Եէնի-Գափու, Գում-Գափու, Լանկա թաղերու, Սուլթան Պայազիտի, Եէնի-Ճամիի, Կալաթայի հը. բապակային պատեր կարմիր յայտարարութիւններով ծածկուած էին. այդ յայտարարութիւններ բողոքելով կառավարութեանց դէմ կը պախառակէին Աշրգեան Պատրիարքը որ մի փորձանք դարձաւ հայ ազգի ճգնաժամին մէջ բազմելով այն պահանջկոտ աթոռին վրայ որպէս է պատրիարքականը։ Կառավարութիւնը ի հարկէ ցնցուած այս նոր երեւոյթին առաջ, հեղինակները ձեռք անցունել կը ջանայ և չի կրնալով յաջողիլ ամօթապարտ կը մնայ։

Գաղտախոյզն նոր լուրեր կ'առնուին ըստ որոց յուզում կայ տեղական հայ տարրին մէջ. ձերբակալութիւններ եղած են։

Կ. Շ.

ՀՐԱՒԷՐ

ՑՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

...Խմբագիր,

Ես շատ թերթեր կարդալու սովորած եմ տղայութենէս իվեր, և ՀԱՑՔԻՆ ալ առաջին տարիէն սկսեալ անընդհատ կարդացած եմ։ Որքան որ ես կարող եմ հասկնալ, սա բոլորովին տարբեր է բոլոր ուրիշներէն, վասնզի ճշմարտապէս ազատամիտ, ճշմարտախօս, անաչառ և լուրջ է։ Այս յատկութիւնները վերջին ամիսներու մէջ մասնաւոր պայծառութեամբ մը փայլեցան անզուգական ՀԱՑՔԻ մէջ։ Մարդկը մխիթարուի դատարկ և անպատշաճ գաղափարներու աղմկալից հոսանքին քով տեսնելով ՀԱՑՔԻ լուրջ և իմաստուն մտքերու հակահոսանքն որ ազգային փրկութեան գործին մէջ անսահման կարեւորութիւն ունի ըստ իմ խոնարհ կարծեաց։ Երբ այգւոյն մէջ փուշ բուսնի, պէտք է քաջ մ'ալ դտնուի, որ յանձն առնու փուշերն խլել թէպէտ արիւնին և վիրաւորին ձեռքերն։ Կեցցե՛ն խոհուն և արի դործիչք, որք դարերէ իվեր յաւերակս թափառեալ Հայ սոխակին համար ո՛չ փուշ այլ վարդի կոկոններ կը պատրաստեն։

Ո՛ վեհափառ Ծերունի, Հայրիկ ու Հայրապետ Հայրենեաց, ո՛ւշ դիր այս դարձուածներուն, և դործածէ քու օրհնութիւնդ օրհնելիներուն համար և յանդիմանութեան խարազանդ յանդիմանելեաց դէմ։

Հայեր, եղբայրներ, եկէք ողջամիտ հրաւէրին լսենք և ձեռք ձեռքի տուած ընթանանք փրկութեան ուղիղ ճանապարհէն։

Մ. Մ.

(Նիւ Եորք)

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԵՒ ՄԻՍԻԼՄԱՆ ՀԱՃԻՆԵՐ

Սուլթանն որոշեր է Մէքքէի մէջ հիւանդանոց և այլ շինութիւն կառուցանել ուր միսիլման ուխտաւորք լաւ բժշկական խնամք ընդունին և չջարդուին հնտախտէ։ Աւելի քան կէս միլիոն ֆրանք իւր անձնական դանձէն շնորհեր է առ այս նպատակ։ Հաւանական է փատիշահն լսեր է թէ քաղաքակիրթ աշխարհ կը տրտնջայ Արաբիոյ որբազան ջրերուն դէմ որք տգէտ հաճիներուն շնորհիւ հնտախտի անսպառ և անցամաքելի աղբիւր դարձած են։ Մինչև իսկ ոմանք համարձակեցան թելադրել թէ պէտք է Սուլթանին ձեռքէն առնուլ զԱրաբիա որպէս զի քաղաքակիրթ տէրութեանց հսկողութեան և խնամոց շնորհիւ Մէքքէի սպառնալիքէն ազատի աշխարհ։

Վերջին ուխտագնացութեան միջոցին հաճեւորաց թիւն 92,625ի բարձրացած է, թիւ մի որ վերջին 25 տարուան ընթացքին մէջ եզական է։ 1868ին ուխտաւորաց թիւն իբր 23 հազար էր, և անկէ ի վեր երբէք տարի մի 60 հազարի չէր հասած։

Բաւական հետաքրքրական է նշանակել թէ որ ազգէ ու երկիրներէ որքան միսիլման հաճ դնացեր են այս տարի.

Հնդիկ	20,937
Եգիպտացի	16,325
Մոգրոպեան և Ալճերիացի .	15,741
Ճավացի	13,856
Թուրք և Սիրիացի	13,447
Արաբք, Եամանցի և Սիւտանցի	9,675
Պարսիկ	2,664

Միսիլման Աշխարհին մէջ վերջին տարիներս մեծ զարթում կայ։

ՕՐԷՆԿ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՔԱՂԱՔԱՑԻ ԼԻՆԵԼՈՒ

Յայտարարութիւն դիտաւորութեան։ Օտարականն պարտի իւր ընդունելութենէն դոնէ երկու տարի յառաջագոյն երդմամբ յայտարարել դատարանին թէ իւր ճշմարիտ դիտաւորութիւնն է Միացեալ Նահանգաց քաղաքացի լինիլ, և ամենայն օտար իշխանի կամ տէրութեան, մասնաւորապէս այն տէրութեան որում հպատակ կը դտնուի այն ատեն, հաւատարմութենէ և հպատակութենէ բոլորովին հրաժարիլ։ Այս գործողութեամբ կը տրուի նախապատրաստական կամ առաջին թուղթն։ Այս առաջին թղթով որպէս թէ նշանուած կը լինի Ամերիկայի տէրութեան։

Երդում ընդունելութեան ատեն։ Վերոյիշեալ երդումն պիտի կրկնէ երբ քաղաքա-

ցի լինելու խնդիր մատուցանէ։

Պայմանք քաղաքացի ընդունելու։ Օտարականն պարտի ապացուցանել դատարանին թէ ինքն առ նուազն հինգ տարի Միացեալ Նահանգաց մէջ շարունակօրէն բնակած է, որոյ վերջին մէկ տարին գոնէ բնակած լինելով այն նահանգին մէջ ուր դատարանի կը դիմէ, նաև թէ այդ միջոցին իբրեւ լաւ բնաւորութեան տէր մէկն վարուած է, Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան սկզբանց յարած, և երկրին խաղաղութեան և բարօրութեան նպաստաւոր տրամադրութիւն ունի. այդ պայմանօք պիտի ընդունուի օտարականն ի քաղաքացութիւն, և պիտի ստանայ իւր քաղաքացութեան երկրորդ կամ բուն թուղթն—իբր թէ պիտի միութեան պրոակն կատարուի։

Զինուորականաց համար բացառիկ օրէնք կայ։ Եթէ չափահաս օտարական մի Միացեալ Նահանգաց բանակաց մէջ պատուաւոր կերպով ծառայած լինի, կրնայ աղերսագրոյ մատուցմամբ քաղաքացի ընդունուիլ առանց յառաջագոյն յայտարարութեան, բաւական է որ առ նուազն մէկ տարի բնակած լինի Միացեալ Նահանգաց մէջ։

Անչափահասք։ Եթէ դեռ 21 տարեկան չեղած այս երկիրն եկած լինի օտարականը, կրնայ հինգ տարի հոս բնակած լինելու պայմանաւ քաղաքացութեան ընդունուիլ, հինգ տարւոյն մէջ հաշուելով 21 տարեկան լինելէն առաջ բնակած երեք տարիներն ալ։ Իսկ այն անչափահասն որոյ հայրն քաղաքացի ընդունուած է օրինաւորապէս, ինքն քաղաքացի կը նըկատուի եթէ Միացեալ Նահանգաց մէջ կը բնակի։ Նաև եթէ ամերիկեան քաղաքացւոյ մի զաւակ ծնի օտար երկրի մէջ, զաւակն ամերիկացի կը ճանչուի։

ԲԱԶՄԱՎԷՊ

ԲԱԶՄԱՎԷՊ, Վենետկոյ Մխիթարեանց Միաբանութեան ամսաթերթն, իւր յիսուն և երկրորդ տարին կը սկսի շուտով։ Նոյեմբեր թուոյ պարունակութիւնն է հետեւեալն.—

1 Պատմութիւն Ս. Սեղբեստրոսի, համեմատութեամբ հայերէն և յունարէն թարգմանութեանց։

2. Հայկական բուսաբառութիւն։

3. Մատենախօսական.—Էմիլ Տեզա հայագիտին քննադատութիւնն Եղիշէի

4. Հայք և դիցաբանութիւն Հայոց։

5. Դրանսիլուանիոյ Եղիսաբեթուպոլիս քաղքին ազգային այլ և այլ օրէնքներն ու կանոնադրութիւններն։

6. Մեր Ը տառն, Զ, Ը և Ս տառից հետ։

7. Բոլոմպեան Ցուցահանդէսն ի Շիքակոյ։

ԲԱԶՄԱՎԷՊի տարեկան բաժնեգինն է երկու տոլար։ Հասցէն է—

Direction de la Revue Basmavep
Couvent St. Lazare
Italie Venise

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ

ՀԱՆԴԷՄՆ Վիէննայի Մխիթարեան Միաբանութեան ամսաթերթն է՝ բարոյական, ուսումնական և արուեստագիտական։ Ութերորդ տարին կը սկսի յառաջիկայ Ցունուարին։ Ահաւասիկ Նոյ. թուոյ Բովանդակութիւնն։

1. Բժշկական.— Միջին ու Բժշկական գրութիւնք։

2. Մատենագրական.— Վարդապետութիւն առաքելոց անվաւերական կանոնաց մատեանը։

3. Կենսագրական.— Բժիշկ Տօքթ. Ֆէրվիչէն էֆ. (պատկերաւ։)

4. Մատենախօսական.— Քանի մը հրատարակութիւնք։

5. Գրական.—Ազգային հրատարակութիւնք 1892 տարւոյ։

6. Նորագոյն աղբերք Եղնկայ Կողբացւոյ։

7. Բանաստեղծական.

8. Այլ եւ այլք.— Կիտրոնի գործածութիւնը։

9. Քաղաքական Տեսութիւն։

«Հանդէսի» տարեկան բաժնեգինն 2 տոլար է։ Հասցէն է

Direction du HANTESS
Couvent Mechithariste
AUTRICHE, VIENNE

ՀԱՆԴԷՄՆ ինչպէս նաև ԲԱԶՄԱՎԷՊն, բազմահմուտ միաբանութեանց գործերն են և արժան է որ արտասահմանի ուսումնական մեր երիտասարդք աւելի մեծ թուով բաժանորդ գրուին ու վայելեն զայնս։

ԱՐԱՔՍ

Այս հանդէսն տարին երկու անգամ կը հրատարակուի, իւրաքանչիւր հատորն իբր 300 երեսներէ բաղկացեալ և բազմաթիւ պատկերներով զարդարեալ։ Նիւթերն բոլորովին ազգային են։ Արտասահմանի համար բաժանորդագինն է 8 ֆրանք։ Հասցէն—

Monsiour Simeon Goulamiriantz
RUSSIE St. Petersbourg

«Արաքսի» հինգերորդ (1893) տարւոյ առաջին գրքին բովանդակութիւնն է.—

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.—Խմբագրութիւնից

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ.—Հայ մամուլի վիճակի առիթով։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ.—Ատրպատականը ներկայումս։ Պարսկաստանից և Տաճկաստանից։ Սարուշէն գիւղը։ Հայ Թխելը Հայաստանում։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.— Յիշատակաց ծրար մը։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ.— Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան։ Ստեփաննոս եպիսկոպոս Մխիթարեան։ Ատրպատականի Հայոց ապագան։ Խորէն արքեպիսկոպոս Նարպէյ։

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԻՐ.— Բէթղեհէմի այրի սուրբ Մանկիկը։ Ռափայէլ Պատկանեանի Յիշատակին։ Աղէտը։ Այուդաղ։ Քուռի Ափին։

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ.— Ֆ. Դոստոեւսկի. Յիշատակարան մեռեալ տանից (Յաւելուածում) շարունակելի.

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ.— Du Caucase au golfe Persique a travers L'Armenie, ևն.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ.— Վրաց ժողովրդական երգեր։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ։

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ.— Գեղարուեստը և նորա նշանակութիւնը։ Գեղարուեստների մասին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԱՐԱՔՍ պէտք է առ նուազն 100 բաժանորդ ունենար Ամերիկայի մէջ, բայց չեմք կարծեր թէ այժմ աւելի քան 10 բաժանորդ ունի։

ՈՒՐԱԽԱԼԻ ԼՈՒՐ ՄԻ

Արգոյ ընթերցողք շատ պիտի ուրախանան իմանալով թէ մեր ճշմարիտ և անմահ բանաստեղծ

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ

ԸՆՏԻՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆԻ
ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐ

Հեղինակի 2 պատկերով, ինքնագրով, կենսագրական նկարագրով և Նոր-Նախիջեւանցւոց լեզուի համառօտ բառգրքով,

Լոյս տեսաւ, հրատարակութեամբ ՎԱՌՎԱՌԷ Յ. ՔԱՆԱՆԵԱՆԻ, յօգուտ Ռափայէլ Պատկանեանի ընտանեաց։

Առաջին հատորն կը բովանդակէ Պատկանեանի ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐՆ, և կը բաղկանայ 360 երեսներէ. Բ. Հատորն աւելի ստուար, է ԱՐՁԱԿ ԳՐՈՒԱԾՆԵՐՈՒՆ հաւաքածոյն։

Երկու հատորն իմիասին արտաքոյ կարգի աժան գնով կը վաճառուին, այսինքն երկու տոլարի (4 րուպլի կամ 10 ֆրանք։) Ամեն երիտասարդ պէտք է գնէ այս երկու հատորներն։

Պէտք է գնողներն դիմեն հրատարակչին, որոյ հասցէն է—

Տ. ՎԱՌՎԱՌԷ ՔԱՆԱՆԵԱՆ
ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ
ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԻԱ,
MADAME VARVARA KANANIAN
Institut Lazareff, MOSCOU, RUSSIE

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Խարբերդէն, Հոկտ. 21 թուով, կը ծանուցանեն թէ Կէօլճիքի եկեղեցին կողոպտեր և600 լիրայի արժէքով իրեր տարեր են աւազակք։ Նաև թէ Խարբերդցի հաճի Սեդրաք Աղայի որդին զԳրիգորիկ (որ Բալուի նաւակին տեսչութիւն կ'անէր) գիշերով լեռն են տարեր աւազակք եւ 15 լիրա փրկանք կը պահաջեն։ Աւազակք սպանութիւն մ'ալ գործեր են Փէրչէնճ գիւղի մէջ՝ Տիար Պօղոսի եղբօրորդւոյն վերայ։

Պէյրութէն կը ծանուցանէ մեզ թղթակից մի հետևեալ ցաւալի արկածն—

Քիչ մնաց որ մեր Հայ հայրենակիցնե-

րէն երկուքն զոհ լինէին անգիտութեան։ Պարոնայք Տօնապետ Տէր Պողոսեան խուլագեղցի և Մատթէոս Վարդանեան Ուզունօպացի, գիշեր մի ի Շիքակայ հիւրանոցի մէջ անցունելու առիթ ունենալով յուղեւորութեան, պառկելու ատեն կազի ճրագն փչեր են փոխանակ ծորակն գոցելու։ Հետեւեալ օրն մինչև կէս օր դուրս չեն ելներ սենեկէն, ուստի հիւրանոցին տեսուչն կասկածելով մարդ կը յղէ զայնս արթնցունելու։ Սենեակն կազով լեցուն էր, որ կը խուսափէր բաց մնացած ճրագաբերնէ մի։ Արկածեալներն ի հիւանդանոց փոխադրուեցան, ուր բժիշկք յայտարարեցին թէ վիճակն յոռի է և կրնայ մահացու լինիլ։ Երեքշաբթիէն մինչև ուրբաթ կը դարմանուին և բաւական լաւանալով ճամբայ կ'ելնեն Ռէյսին գալու, իրենց բուն քաղաքն։ Ուրբաթ երեկոյին հոս հասան, բայց տակաւին գինովի պէս էին և ապուշ ապուշ մարդոց երեսն կը նայէին և չէին ուզեր խօսակցիլ։ Իրեցմէ չկրցինք տեղեկանալ դէպքին, մյչև որ թերթին մէջ կարդացինք և մենք իրենց բացատրեցինք եղելութիւնն։ Այսօր, շաբաթ, աւելի լաւ են, և ամեն վտանգ անցած կը համարիմք։

Պէտք է նոր եկողներուն դաս տան մեր հայրենակիցք այսպիսի պարզ բաներու մասին։ Պէտք է հասկցունեն թէ կազի ճրագն ինչպէս մարելու է մարդ որ իւր արևն չմարէ։

Վ. ԲԱՐԱԿԵԱՆ

***

Ինտիանայէն կը գրեն մեզ.

Տիար Յակոբ Տալգրանեան, Կեսարացի երիտասարդն որ աստուածաբանական դպրոցի աշակերտ էր յԲիլէնտ, Ինտիանայ, Հոկ. 24ին մեռած գտնուեցաւ իւր անկողնոյն մէջ։ Ինքն 28 տարեկան էր և ըստ երևութին առողջ։ Իւր յանկարծական մահն կ'ընծայուի սրտի թեթև ախտաւորութեանն որ միքանի տարիէ իվեր նշմարելի եղած էր։ Յիրաւի ալ դիագնոսական քննութիւնք ցուցին թէ սրտի հիւանդութեան զոհ գնացած էր։ Հոկտ. 25ին յուղարկաւորութեան հանդէսն կատարուեցաւ, ուր ներկայ էին դպրոցին ուսուցիչք և ուսանողք։

ՄԻՀՐԱՆ ՍԷՐԱՑԼԵԱՆ

Հետեւեալ տողերն զոր Սէյլէմէ կ'ուղղէ մեզ նոր բաժանորդ մի, կը ցուցնէ թէ ինչպէս նիւթական նեղութեան մէջ գտնուող մալ կրնայ ազգային թերթի բաժանորդ լինիլ, եթէ կամք անէ։

Խմբագիր Տէր.- Շատոնց կը ցանկայի պատուական ՀԱՅՐի բաժանորդ ընթերցողներէն լինիլ, բայց նիւթական անձուկ վիճակս չէր ներեր այս իմ փափաքս իրացունելու։ Բայց նկատելով թէ բաժնեգինն խիստ չնչին գումար մ'է բաղդատելով թերթին օգտաւէտ պարունակութեանց, որոշեցի որ խնդրեմ ձենէ որ նամակիս ծոցով յղածս ընդունելով զիս բաժանորդ նշանակէք։ Մեր ուրիշ պիտոյքներն գոհացունելու համար այնքան կ'աշխատինք, միթէ չարժե՞ր որ զոհողութիւն մալ ընենք մեր մտաւորական տկար և քաղցեալ վիճակին դարման տանելու համար։

Ե. Կ. Ա.

***

Հետեւեալ նամակն համառօտելով կը հրատարակեմք դուրս թողլու համար մէկ քանի կետեր որոց մասին նախորդ թուով բացատրութիւններ տուած եմք արդէն և մեր արդոյ թղթակիցն ալ յուսամք համոզուած կը լինի.—

Մեծարգոյ խմբագիր,

Ձեր «Յայտարարութիւն» շատ մի զարմանալի և անյարմար զրոյցներու և մեկնութիւններու տեղի տուած է։ Աւելորդ կը համարիմ մի լքանիք ըսելու. քանզի անշուշտ դուք արդէն պատրաստ էիք փոթորիկին դիմանալու։ Դուք նիւթական շահ և անձնական փառք չէք սպասեր, վստահ եմ։ Ձեր անցեալ կեանքը գիտեմ, և այժմ ալ ժողովուրդը շողոքորթել չուլով ձեր նիւթականին դէմ կը գործէք։

Փափաքելի էր որ ուրիշ գործիչներ ալ ձեր օրինակին հետևէին և ժողովուրդը քաջալերելու մէջ խոհեմ և հեռատես գտնուէին, ոչ թէ հեռաւոր ապագան մոտիկ ցուցնէին և պզտիկ գործ մը դիւցազնացունէին, կամ թէ թիւերն տանով և կամ հարիւրով բազմապատկէին...

Արտասահմանի Հայոց մէջ տիեզերական կեդրոն մը կազմելու գաղափարն փառաւոր է, և հակառակորդք ոևէ լուրջ ընդդիմախօսութիւն ընել չեն կրցած ցարդ։ Յարատևեցէք, խորհող Հայեր պատրաստ են օգնել ձեզ բանիւ և գոր-

ծով։ Բարի յաջողութիւն կը մաղթեմ։ Աւելի աղէկ է ձեզ փոքրաթիւ բայց հաստակացող կուսակիցներ ունենալ։

Լորէնս, 13 Նոյ. 93, ՀՐԱՉԵԱՑ

***

Փիթսպըրկէն (Փէնդիլվանիա) կը գրէ թղթակից մի, Նոյ. 23 թուականաւ։

Տէր Խմբագիր,

Վերջերս նամակներ ստացայ Նիու Եորքէ, Պոստընէ և Ուստըրէ, և իմացայ թէ գործի չգոյութիւնը ծանր նեղութեան մէջ ձգեր է մեր հայրենակիցներու մեծ մասն։ Թղթակիցներն փափաք յայտներ էին հոս գալ գործ փնտռել, և ես իրենց պատասխանեցի թէ հոս ալ գործ չկայ, և աւելի լաւ է որ մնան ու ջանան գործ գտնել ուր որ են։

Երէկ առաւօտ երբ գրասենեակ կ'երթայի, տեսայ թէ աւելի քան 200 գործաւորք խռնուած էին գործարանի մը օֆիսին առջեւ. Փոլիսն կ'աշխատէր գործարանատեառն առջև ճամբայ բանալ իրեան մէջէն։ Կէս օրէ վերջի լրագրէն տեղեկացայ թէ գործարանատէրն նախորդ օրուան թերթով չիշ լուացող մը ուղեր է եղեր, և այդ ծանուցումն է որ հարիւրներ էր բերեր ուր որ մէկ հոգի պէտք էր։ Այս կը ցուցնէ ձեր ընթերցողաց թէ այժմ ի՞նչ է այս գործաշատ կարծուած քաղաքին գործաւոր դասուն վիճակն։

Յ. ՇԱՔԱՐԵԱՆ

***

Նոր բաժանորդ մի կը գրէ մեզ—

Յարգելի խմբագիր,

...Մի քանիներու բուռն դիմադրութենէն շատ ազդուելու տեղի չկայ. վստահ եղէք թէ շատեր աւելի ջերմ եռանդով կը սիրեն թերթդ։ Ես լաւ զգացած եմ թէ, եթէ Հայ մը միայն մի լրագրի բաժանորդ կրնայ դրուիլ, «Հայք»ի բաժանորդ լինելու է, մանաւանդ եթէ մի քիչ մշակեալ միտք ունի։ Ձեր պատուական թերթին մէջ ոչ միայն ազգային լուրեր, թէ յատուկ թղթակիցներէ և թէ Եւրոպական և ամիրիկական թերթերէ առնուած, կը գտնէ ընթերցողն, այլ և խոհուն գրչի ծնունդ եղող յօդուածներ, և որ ոչ ինչ նուազ պատուական է, մաքուր լեզու և պարզ ոճ, գեղեցիկ տրամաբանութեամբ հանդերձ։ Իրօք մենք չատ կարօտ ենք տրամաբանական կարողութիւններս գործածել սովրելու։

Ես ալ ՀԱՅԲԵԱՆ եմ, թէպէտ «Հայք»ի խմբագիրն աչքովս տեսած չեմ, բայց քաջ համոզուած եմ թէ իր լրագրի մէջ ցուցած վեհութեան օրինակին իւր դիմախօսները հետևելու կարօտ են։ Լուսամիտ երիտասարդութիւնն երախտապարտ պիտի մնայ ձեզի։ Կը խնդրեմ ընդունիք ներփակ երկու տոլարն և գիս բաժանորդ ընդունէք 1894ին համար։

Մաունդ Ուօշիկթըն Տ. Տ. Ն.

20 Նոյ. 93

***

Նիու Եորք քաղաքի այլ Ի. այլ ուսումնական հաստատութեանց մէջ այս տարի կան հետևեալ Հայ ուսանողներն.—

Տ. Տ. Միհրան Բանունակեան, Յարութիւն և Արմենակ Պարսամեան կ'ուսանին բժշկութիւն Ն. Ե. Եիւնիվերսիթիի մէջ. Ե. Մաթոսեան՝ Պէլվիուի մէջ. Յովհաննէս Թորոսեան՝ գիտութեան աշակերտ է գօլէճ օվ սիթի օվ Ն. Ե. ի մէջ։ Գրիգոր Շիրաճեան և Մանուկ Պէլեան՝ աստուածաբանութեան աշակերտ են Եունեըն Սէմինէրիի մէջ։

Գ. Տէօքմէճեան, հաստատեալ ի Բուսճուք, Պուլկարիա, Պատիւ ունի ծանուցանել թէ հիմնած է ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ մը, և կը ստանձնէ դպրոցական դասագրոց և պէսպէս պիտոյից ինչպէս եւ այլ ամեն գրքերու, լրագրոց եւ հանդէսներու, հրաւիրատոմսից եւ այցատոմսից յանձնարարութիւններ կատարել մեծ եւ փոքր քանակութեամբ եւ դիւրամատչելի պայմանօք։

C. F. RANDALL

177 Front ST. Worcester, Mass.

Պատիւ ունիմ ծանուցանել Ուսթըրի արգոյ հայ հասարակութեան թէ իմ վերոյիշեալ խանութին մէջ կօշիկներ և բըպըրներ կը վաճառեմ այնպիսի գներով և այնպիսի կերպով որ անշուշտ հաճելի կը լինի իմ հայ հաճախորդաց։

Ծանուցանելով ևս թէ բացարձակապէս և ՄԻԱՑՆ ՄԷԿ ԳԻՆ ունիմ, կը սպասեմ ձեր հրամանաց և կը մնամ յարգանօք

Ձերդ Բանտալ

MORRISON & Co.

88 Fulton Street New York

ՄՕՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ՎԱՐՊԵՏ ԴԵՐՁԱԿ

Կը շինին պատուական ձեռք մի ըզգեստ 20 տալերով, օվըրքոթ 20 տալերով և փանթալոն 5 տալերով։

NATIONAL MUTUAL INSURANCE Co.

WORLD BUILDING, NEW YORK

ԸԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴԱՐՁ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Կենաց Ապահովագրութիւն ին՞չ ըսել է, գիտէ՞ք, Հայեր։

Եթէ չգիտէք, ձեզ ըսենք մենք։

Մարդ մի, որոյ առողջական վիճակը քննուելով գոհացուցիչ կը գտնուի բժիշկին կողմանէ, ընկերութեանս կը վճարէ տարին այսչափ թալէր, 20 կամ 30 կամ աւելի, ըստ հասակին, և երբ մեռնի, իւր ժառանգորդք կ՚ընդունին հազար թալէր, եթէ պայմանն հազար թալերի է, կամ մինչև հինգ հազար թալէր, ըստ պայմանին։

Երբ մէկը այսօր անդամ ընդունուի, և իւր առաջին տարեկան տուրքն վճարէ, և դժբաղդաբար վաղն մեռնի, պայմանադրեալ հազար կամ աւելի թալէրն կը վճարուին ընկերութեանս կողմանէ այն ժառանգորդին որոյ յօգուտ պայմանն կնքուած լինի։

Այս մասին հետաքրքիր եղողներու «Հայք» ի խմբագիրն կրնայ աւելի տեղեկութիւն տալ

«ՄԱՐՋԱՐԱՆ», դասագիրք զինուորական կրթութեան, բազում ձևերով բացատրեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գաբրիէլեանի գին50 սէնթ կմ 2 ու կէս Ֆրանք։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ, 1888, Նախապէս«Արևելք»ի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան։ Գին 20 սէնթ կմ 1 Փր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն։ Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգյին ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակահայ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն։

Գին 20 սէնթ կամ մէկ Փրանք։

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, 21 դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատընտիր ընթերցուածոց, երկասիրութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի ,1891, գին 1 թալէր կամ 5 Փրանք։

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գաբրիէլեանէ, հանդերձ պատուական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի։ 1892, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ։

FRANCOIS FRENTZ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՂԱԳՈՐԾ
311 SEVENTH AVE. NEW YORK
27դ և 28դ փողոցաց միջև

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ. ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանելու թէ
1554 B,way
46 և 47՝ *փողոցներուն միջև*

Constantinople Bazzar*ի*, (*ԲՈՆՍԹԱՆԹԻՆՈՓԼ ՊԱԶԱՐ*) *մէջ ունի Թրքական մեծաքանակ գորգեր(խալիներ)և Թրքական ուրիշ ապրանք, զորս կ'ուզէ բոլորովին ծախել լմնցունել յայժ* ԴԻԻՐԱԳՆԻ, ՀՈԼՍԷՑԼՈՎ (wholesale)*։ Արդ, վաճառականներ որոնք այս գործով կը զբաղին, կրնան այս պատեհութենէն օգուտ քաղել, աժանագին հոլսէյլ ապրանք գնելու։ Նաև այն հայրենակիցներ որոնք կը փափաքին ծննդեան և նոր տարւոյ առթիւ ընծայ տալ իրենց բարեկամաց, կրնան մեր պազարէն գնել իրենց ուզածն, թէ՛ ԸՆՏԻՐ և թէ ԱԺԱՆ*։ .

Յակոբ Էքիզեան		*Կարապետ Էքիզեան*
30 Eddy street		28 South Margin Street
Providence R. I.	U. S. A.	Boston Mass.

ԵՂԲԱՐՔ Յ. ԷՔԻԶԵԱՆ

Յովհաննէս Էքիզեան Գէորք Էքիզեան

Էքիզեան եղբարց թէ Միացեալ Նահանգաց և թէ Կ. Պոլսոյ կամ Խարբերդու տուներու չահերն միևնոյն տան վերաբերելուն, մանաւանդ Միացեալ Նահանգաց դրամատանց միայն հետ համաձայնութիւն մի գոյացուցած ըլլալով Եւրոպիոյ կողմերն ստակի փոխադրութեան գներուն բաւական տարբերութիւն մը ձեռք բերած ըլլալով, կը համարձակին ըսելու թէ ամենէն վար գներով ստակի փոխադրութիւններ պիտի ընեն Եւրոպայի կամ Թուրքիոյ կողմերն։ Անոնք որ կը կարօտին ստակ ղրկել դէպի Եւրոպա կամ Կ. Պոլիս, Ատանա, Տիգրանակերտ Խարբերդ, Մալաթիա, Բալու, Ակն, Արաբկիր, Չիմիշկէզէկ, Չունքուշ, ընդհանուր շրջականերուն, պէտք է ուղղակի գրեն յիշեալ տանց հասցէներուն, որով իրենց փափաքանաց համեմատ պիտի ստանան անմիջապէս իրենց փոխանակագրերն ամենէն գոհացուցիչ կերպով, և փոխարէնը պիտի գանձուին առանց դժուարութեան և առանց որ և է ծախքի մի հարկ ունենալու։

ՎԱՅԵԼՈՒՉ ԶԳԵՍՏՆԵՐ

գնելու համար
եկ
THE STAR CLOTHING Co.
Գին կտրել չկայ

Վասն զի մէկ գին միայն ունի, բայց չափաւոր և ճիշդ գին։ Մեր հասցէն է
385 *Մէյն Փողոց, Ուուսթըր*,
385 Main St. Worcester, Mɔss.

Ո՛ Հայեր,

որ կը բնակիք Ուուսթըրի մէջ, ձեր ոտքին յարմար են իմ դիմացկուն կօշիկներ, և ձեր բանին կուգան իմ գներս։ Իմ անունս Լաշանս է, և խանութս կը գտնուի Ֆրոնթ սթրիթի 60 *նիւմէրոն։ Միայն մէկ գին ունիմ. պազար չեմ ըներ։ Ո՛վ որ կ'ուզէ չխաբուիլ և չունչը չհատցունել գին կտրելու համար, և ո՛վ որ չուզեր որ ոտքն նասըր լինի, թող գայ և իմ ընտիր կօշիկներն փորձէ*։

T. LACHANCE, *կօշկավաճառ*
60 Fr nt St. Worcester, Mass.

THE WORCESTER MECHANICS
SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը ճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբեր ամսոց կէսէն հաշուելով։

BUSH & CO.
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.
Գ Ե Ղ Ա Գ Ո Ր Ծ
(*Հաստատեալ ի* 1849)
65 Front St. Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

Ed. LEGOLL .
ԴԵՂԱԳՈՐԾ
286, 7*դ. Էվինիու* *Նիւ Եորք*
26*դ. և* 27*դ. Փողոցներուն միջև*
Դեղագրեր կը շինուին խնամով

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Մ. Ս. Գ Ա Բ Ր Ի Է Լ Ե Ա Ն